

և նորա ընթելից զների թիւը բովմացնելու՝ նա կստանայ նաև իրեն վայել ընդհանրական բնաւորութիւնը և կդառնայ մատչելի ու սիրելի Մայր Աթոռի բոլոր զաւակների համար։ Այդ զիտակութեամբ մենք գիմաւմ ենք իրկին Մայր Աթոռի բոլոր հարազատներին, չմնայել իրենց ձեռքնառութեամբ՝ նորա բարգաւաճման և ծաւալման նպաստելու։ Նորա էջերը բաց են անխօնիր բոլորի առաջ, որոնք միայն առպանք սաղացներ, կամ անուն վասակել չեն կամենում, այլ օդոտակար լինելու ցանկութեամբ են զրիչ ձեռք առնում։ Նորա համակրօղների և ոչ պարտագիր բաժանորդների տարեցարի բազմանալլ խրախուսում՝ մեզ՝ յոյսերով փակել անցեալ թուակներ և կրկնապատկուած եռանդով նորն սկսել։



ՄԵՅԻ ԱԹՈՒԹ.

Հակո. 25. Դիւտ Խաչի տօնի օրը, Նորին Ս. Օծութիւնը պատշաճաւոր հանգիսով, խուռն բազմութեան ներկայութեամբ, եպիսկոպոսական աստիճանի շնորհը բաշխեց Բարձր. Տ. Յակովի-Աշոտ Ճ. վարդապետ Փափազեանին, Գևորգ Ճ. վարդ. և թուակնեանին, Յովհաննէս վարդ. Շիրակունուն և Եղիշէ Ճ. վարդ. Դաւիթ Բակեանին։ Ձեռնադրութեան ժամանակ, երբ ընծայեալներին պիտի բարձրացնեն եօթներորդ աստիճանից «երկնաթռիչ» արծուի, վերայ. Նորին վեհափառութիւնը մի քանի խօսքով յիշեցրեց նոցա իւրաքանչիւրի անցեալ գործունեութիւնը, ապա յաջորդ ընթելցուածների մէջ՝ ընդհանելով տեղ տեղ մաշտոցի իմաստուն խրաները, գեղեցիկ խորհրդածութիւններով բացանում՝ եր նոցա միավոր, յորդորում ընծայեալներին առանձնապես ուշագրութեան առները թէ «եպիս-

կոպոսին պարու և աղքատառակեր լինել, և հոգալ անգագար աղքաների, անանիների, որքերի համար. փայլել համեստութեամբ և չնմանել այնպիսիներին, որոնց դռնից յետ է գարձնում ծառան խնդրատռներին, միշտ նոյն խօսքերով՝ «պիտօպուր քնած է, եպիսկոպոսը ժամանակ չունի» ելն։

Յաջորդ երկուշարթի օրն իւր անդրանիկ եպիսկոպոսական պատարագը մատոյց Տ. Յակով Սրբազնն, երեքշարթի Եղիշէ Սրբազնն և հինգշարթի Գևորգ Սրբազնն։

Միաբանական սեղանի ծախօր նորընծայ սրբազններն էին հոգացել։ Ծաշի ժամանակ Արժ. Գարեգին վարդ. Յովհեփեանը բարեմազթութիւններ արաւ և առաջարկեց նորընծայ սրբազնների կինացը, շեշտելով նոցանից իւրաքանչիւր շեշտելով մաղթել առ Աստուած, որ նոցա կարողութիւն տայ իւրաքանչիւր ասպարիզում՝ գործելու եռանգուն կերպով և Մայր Աթոռի չեռաւոր զաւակներին հաստատուն կապերով կապերով կապելու նորա հետմանաւորապէս նորընծայ Եղիշէ սրբազնի համար ցանկալ, որ իւր աեւզութեան յանձնուած Արմաշի Դպրէ վանքը այդ բարձր կոչման արժանի դիրքի մէջ պահէ, որպէս զի խօսկան Դպրէ վանք լինի և մնուցանէ իւր սաների մէջ այն սիրան ու հոգին, ինչ որ ունեցել են փառաւոր անցեալում մեր հին գարեփանքերի սաները, և արգիւնաւոր կացուցել հոգեոր ասպարիզում։ Սորանից յետոյ երգուեց «Հայ մեռնիքարզը», որին կցելով իւր խօսքը Յակովը սրբազնը իւր օծակիցների կողմից շնորհակալութիւն յայտնեց, հաւատարմական զգացումներ արտայացտեց զէպի Ամենայն Հայոց Հայրապետութեան Աթոռը, և առաջարկեց Նորա Աստուածընակի Դահակալի համար երկար օրեր մասզմել, յարատե հաստատութիւն Նորա աջակից միարանութեան և հայ ապրելու զօրութիւն ու տոկունութիւն Նորա հեռու և մօտիկ գտնուող հոգեոր որդւոց։

Նոյն օրը երեկոյեան երեք օտարահպատակ Սրբազնները մեկնեցին միատեղ զէպի իւրեանց պաշտօնատեղիքը Տ. Գևորգ Սրբազնն, ինչպիս յայտնի է, ընդհանուր հովիւ է

կարգուած եւրոպական գանազան երկրներուում ընակող հայերի:-մակ օ. Յովհաննես Սբրազան, որ հետեւ եալ կիւրակի օրը եպիսկ. անդրանիկ պատրագ մատոյց կարգուած է Սանահնի վանքի վանահայր, ուր և ուղերձու եցաւ նոյեմբերի 9-ին:

Նոյեմբ. 15-ին Մայր Աթոռ եկաւ Հարսի փոխանորդ Արք. Եղիշէ վարդ. Մուրագեանը իւր վիճակի ինչ ինչ կարեւոր գործերի համար, նոյեմբ. 17-ին Նոր Նախիջևանի փոխանորդ Արք. Միթթար վարդապետը որին վեհափառ Հայրապետը հեռազրով հրամացել էր վիճակի գործերը ու Խաչի վանահայր Արք. Մուշէ վարդապետին յանձնել և շտապել այստեղ նոր պաշտօն ատանձնելու. նոյեմբ. 21-ին Սաղեանի վանահայր Արք. Թումա վարդապետը որ նշանակուած է վանահայր ու Տաթեի վանքի և փոխանորդ նոյն վիճակի: Արք. Թումա վարդապետը ուղերձուած է արդէն գէպի իւր պաշտօնատեղին. իսկ Արք. Միթթար վարդապետը կարգուած է փոխանորդ Ազերանիզրապոլի վիճակի, և կմէինի շուտով:

Նել և աղօթել Խոր Համար, աղա օրհնեց ամէնքին և մատոյց ու աջնի համբոյր: ‘Նորին Վեհափառութեան ճանապարհ ձգեց մինչեւ Երևան Գեր. Երիստակէս արքեափակովուր մի քանի միաբանների հետմինչեւ Տիփիսիս կուղեկցէ միայն Դիւմնապետ Երժ. Կորիւն վարդապետ, իսկ մինչեւ Դիլիջանս այնտեղից՝ Ղարս գնալու Համար՝ Երժ. Եղիշէ վարդապետ:

ՄԱՏԵՒԱԳԱԲԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ.

Մայր Աթոռի մատենագարանի Համար շնորհակալութեամբ ստացել ենք հետեւ ալ նու երները.

Զեռազիր

1. Երժանակատիւ Էմմանուէլ յանամայ Հայիմեանից, Թումա գիւղ մի բոլորապիր աւետարան: Տպագիր
2. Զարարաշեամից «Երբագոն պատարագ ամառոցք Հայոց» Հ. Գաթընեանի Հրատ. Հ. Տաշեանի. Ամենաս. 1897 թ.;
3. Լազարեան ձեմարանի Պարուրինից Մկրտիչ Էմինի երկասիրութիւնները. Եղանակ Ա. Առաքելաց. 1898:
4. Պ. Արշակուն Արգումանեան Արշակունից Հ. Բենիկ վարդապետի ձեռքով մի օր. Բրատ- սկայ Պոմոց Արմանամ 2-օւ իւրական Մո- սկվա, 1798.
5. Պ. Արշակուն Արգումանեան Արշակունից Հ. Բենիկ վարդապետի ձեռքով մի օր. Բրա- տսկա Պոմոց Արմանամ 2-օւ իւրական Մո- սկվա, 1798.
6. Խորանարդ Հայոց անդամների միջից անցնե- լով Նորին Արքութիւնը տաճար մուաւ և ծնկաչոք ու զիսաբաց ա- ղօթեց Խջման ու Անդանի առաջ: Ե- պս դառնալով գէպի միաբանները՝ յիշեց սազմոսի խօսքը „Եստուած օքնական իմ և ես յուսամ ի Կա, ապաւէն իմ և եղջիւր գրկութեան իմոյ”, յորդորեց միաբան միրով լի-

Մատեւագաբան աղա օրհնեց աջնի:

Գ. Գ. ՅՈՎՈՒՔԻԱՆ.

Հայոցն Եղմաձայն. Վ. Մոնաстыրէկան Բիблиոտէկա.

ՅԱՅՅԱՐԱՐՈՒԹԻՒՆ.

Նորին Բ. Սրբադնութիւն 8. Սուքիս
որքեպիս ոպոս յայտնում է. ի գիտութիւն
հասարակոց, որ իւր մօտ գտնուած Ուսումն.
Յանձնաժողովը վիրաբերեալ զրութիւնները
չայլաշետական Դիւանին է յանձնել, ուր և
դիմել պետք է այսուհետեւ այդ զրութիւննց
մէջ մնացած վիրաբերելը յիշ ստանալու
համար:

ՏԱՇԿԱՀԱՅՔ.

Աւանայ Սալնապատի Ա. Գրիգոր վանքին
մէջ աղջկանց Մանկանց մը բանալ որոշուած էր
Սակայն վանքին զասարանի, ննջարանի ու սեղանա-
տան մէջ յարմար տեղ չգտնուելուն վանքին ա-
նունով վարձուած տան մը մէջ հաստատուեր է
Մանկանոցը՝ որուն բացումը կատարուեր է Սեպտ-
իմ: Առ այժմ հօն պատոպարուած են 16 զեռա-
տի աղջիկներ, որոնք ցորեները կը յաճախին քաղ-
քին Սանդիստեան երկսեռ վարժարանը.

— Ամերիկայի Հայոց հոգևոր հովիւ 8. Յովուէփ
եպիսկ. Սարացեան Խաչվերացի կիրակի օրը պա-
տարագ մատուցեր է Մանչէսթրի մատրան մէջ և
Ա. Հայրապետին օրհնութեան Խանդակը կարգացնել
տալով՝ քարոզ խօսեր է: Մանչէսթրի փոքրամիւ
հայ գաղթականութիւնը, որուն բարեխորտութեան
դիմում կըլլայ շարունակ՝ թէ իր մէջն և թէ
գուրուէն՝ այս անգամ ալ հանգանակութեան մը
ձեռնարկելով երկու օրուան մէջ 100 անգլ. ոսկի
հաւաքեր և յանձներ է այցելու Սրբազնին ի
նպաստ Ռւսօմըրի Ա. Փրկիչ եկեղեցւոյն պարտքին
բարձման: 8. Յովուէփ եպիսկ. հոկտ. 1-ի շարաթ
օրը Լիվրուուլէն մեկներ է Քամրանիա շոգենաւով
գէպի նիւ-հօրք:

— 8. Ա.ահրիճ Վ. Շահլամեան: որ 10 հոկտ.
վարդապետական գաւազանի իշխանութիւն առաւ՝
Ա. Պատրիարքին անձնական քարտուղար կարգուած
է փոխանակ 8. Փառէն վարդապետին որ, ինչպէս
յայտնի է, Սղերգի առաջնորդական տեղապահ
կարգուելով՝ մեկնեցաւ մայրաքաղաքէս:

— Ինչպէս ամէն տեղ, Տրապիզոնի մէջ ալ վե-
րաբացուեցան գարոցները, եռամսեայ արձակուրդէ
մը եռքը, Քաղաքս ունի ազգ. երկսեռ վարժարան
մը ուր կը յաճախին երկու սեռէ մօտաւորապէս
500 աշակերտ: Այս տարի, նախորդին համեմա-
տութեամբ՝ ուսուցչական մարմինը աւելի կարող
ունի բազմաթիւ է (17 պաշտնեայ, որոնց 12ը ու-

սուցիչ և 5ը ուսուցչունի): պիտի թէն ալ համե-
մատարար աւելի բեռնաւորուած է, այսինքն 700
վիրայ, որուն հազիւ 100ին 25ը ժողովուրդը կը
վճարէ, իսկ մնացեալը Առաջնորդարանը կը հոգայ
իր հասութարիր կալուածներով: Դպրոցին ծրագի-
րը թէն բարձրագոյն նախալիթարանի է, սակայն
առ այժմ բարձր գասարանները չի կան մէկ-երկու
տարիէն միայն բարձր գասարանները պիտի կրնան
բացուիլ, վասն զի հիմա թէ պիտի թէն չի ներեր
և թէ աշակերտ չի կայ անոնց յարմար:

Տրապիզոնի մէջ ուսման կարեսութիւնը
զգացուած է, քաղքին մէջ գրեթէ հայ տղայ մը
չի տեսնուիր: որ դպրոց չյաճախէ: աղջկանց մասին
ալ նոյնչափ հոգ կը տարուի: Ասկայն գիւղերը
կրթական ախսակետով շատ աննախանձելի վիճակի
մէջ կը գտնուին: շատ գեղեր զպրոց չունին, ու-
նեցողներուն ալ աննշան բաներ են, հազիւ գրել
կարգական կուսուցուի: Այս պատճառաւ ներկայ գիւ-
ղացի սերունդը չափազանց տգէտ վիճակի մէջ է
ու պիտի մնայ, եթէ լուրջ ուշադրութեան չառ-
նուի այս կարեսոր կէտը:

— 8. Գարրիէլ Ճէվահիրթեան և 8. Ներսէս
Ասլանեան նորապասկ եպիսկոպուները 18 հոկտ.
քաղաք հասան: Սամաթիոյ Ա. Գէորգ եկեղեցւոյ
քահանաներն ու գպիրներն ընդ առաջ գացին 8.
Գարրիէլ եպիսկոպոսին: որ հանդիսաւորապէս եկե-
ղեցի առաջնորդուեցաւ:

— Իրուսաղեմէն կը հեռագրեն, թէ Գերմանիոյ
Աեհէ: Կայսրն ու Կայսրուհին 19 հոկտ. երկու-
շարթի օրը բողոքական նորակառոյց տաճարին օծ-
ման ներկայ գտնուելէ ետքը, իրենց վրանը վերա-
դառնալով ու պահ մը հանգիստ առնելով: իրի-
կուան ժամը 10ին այցելեր են Ա. Յակոբեանց վան-
քըն ու Լէկեղեցին, և տեսակցեր են Ամեն: 8. Յա-
րութիւն Ա. Պատրիարք Հօր հետ: Նոցին Վեհա-
փառութեանց այս այցելութիւնը տեւեր է երկու
ժամէ աւելի:

Երուսաղեմի մէր Ա. Պատրիարքը, Վեհափառ-
ք. Կայսեր ու Աւկուսմա Վիքթորիա կայսրու-
հուցին Ա. Յակուսութիւնները, Քիրիստոսի գերեզմանը առ-
աջնորդելու համար, և այս առթիւ ստացած էր
Քրոսխական Թագ պատուանցանի առաջին աստիճանը,
զոր յանձնեց Կայսեր հետեւորդներէն Պարոն Քան
Մուլինէ:

Տիարեկրցի խալազող. — Ճէ գաւառակի Շամ-
շամ գիւղէն Տաս հ'ամէ անունով տարի քահանայ
մը անցեալ չորեքշարթի, սեպտ. 23ին, ջորիի մը
վրայ յարդ բեռցած՝ քաղզիս արեկելեան գռնէն
ներս կը մտնէ: դրան պահապանները ծխախոտ
փնտուելու նպատակով ջորին կը խուզարկին: բեռ-
ցուած յարդին մէջ ի՞նչ գտնեն աղեկ: — ութուուն

կտորի շափ սոկելէն, արծաթեղէն խաչեր, և կեղեցական սրբազն անօմներ, զգհստներ և եկեղեցւոյ վերաբերեալ զանազան անօմներ, և լին Ասորիներու կաթուղիկոսին երաշխաւորութեամբ՝ Տառ Դ'ամեն բանտը գրուելէն ազատ կը մնայ հրմա, մինչև որ հարկ եղած հարցադնութիւնները կատարուին.

Այս բոնուած եկեղեցական սրբազն անօմները, սպասները, և լին իրենց զբայ կը կրեն յատուկ արձանագրութիւններ, և ամենը ալ կը պատկանին Առաքելոց վանքին, Ամոռնամ ըսել թէ այս իրեղէններուն մէջ կը գտնուի նաև Թագէոս Առաքեալին Աջ բաղուկը, որ գեթ մեզ համար թէ թանկագին Հնութիւն մըն է և թէ յարգելի նուիրական մասունք մը.

Թէ սրբազն իրեղէնները ասորի խաչագողը ինչ նպատակաւ գողցած էր և ո՞ր պիտի տանէր,

Մակարայեցոց կամ առաքելոց վանքը, որ մեր ազգին սեփականութիւնն է և սկիզբէն-Թագէոս Առաքեալի ժամանակէն—մեր ձեռքը կը գրաւախ, այսօր Ասօրիներ ելեր կռւզեն իւրացնել և որովհետեւ չունին փաստեր և զօրաւոր ապացցցներ, զանազան միջոցներով կաշխատին մեր ձեռքը եղած փաստերն ալ ջնջել։ Այս նպատակաւ գաղտնի կերպով վանքին մէջն ու շուրջը գտնուած տապանագիրները, գրաւոր յիշատակարանները և գրաւոր զանազան արձանագրութիւնները կոտրտեցին ու ջնջեցին. ասոնք բաւական չսեպելով վանքին սրբազն իրեղէններն ալ գողնալով անհետացնել կաշխատին, այն նպատակով թէ ալ գրաւոր արձանագրութիւն չպիտի գտնուի մէջտեղ, որով գիւրաւ պիտի կրնան իւրացնել վանքը, իրենց կարծիքով,

և առավարութեան կողմէ Առաքելոց Վանքը զբկուած պաշտօնական քննիչները, իրենց բնութիւնը կատարելով վերագրձան.

— Գուրտպէլէնի կրօնափոխութեան խնդիրը բոլորտին լմնցած չէ, և ինչ որ եղած ըլլայ Ազգ, Պատրիարքարանին և տեղւոյն Առաջնորդարանին կողմէ, հակառակ կողմէ ճիգերն ու ձեռնարկներն շն դադրած. Բայց Գուրտպէլէնի կրօնափոխութեան գեպքէն շատ աւելի ստիպիչ հանդամանք մը ստացած է նոյն նիկոմիդիոս վիճակին մէջ Խալագտերէի ազգայնոց կրօնափոխութեան գործն, որը հոգային կամ կալռւածական ծանօթ խնդրին բերմամբ, Պատրիարքարանի իրաւասութեան փոփոխման մը հակում կցուցնեն եղեր:

Կաթողիկ ազգայնոց առաջնորդը խնդրին ինկատ կանու լրջութեամբ, բայց կասկածելով թէ մի գուցէ այդ հոգային իրաւունք առաջնորդարանի միջացաւ զիւղացին գարձուելէ զինի, զիւղացին հառմեական իրաւասութեանը թօմթափելով վերագառնայ Ազգ. Եկեղեցին, կառաջարկէ զիւղին երևելաց, որ այդ հողեր զիւղացին զարձուելէ զինի, զիւղացին ալ փոխանցէ Առնեատիկի

Միաբանութեան, և Միաբանութիւնը տէր ըլլալով հանդերձ, առանց վարձու զիւղացին ըստ առաջնոյն հերկէ մշակէ, մինչև այն ատեն, որքան Կաթոլիկութեան թէջ յարտուենաւ. հակառակ պարագային, Միաբանութիւնն ինք տէր մնայ, ահա առաջարկ մը որ իր տեսակին մէջ շատ գործնական է. Աերեայ թէ Գուրտպէլէնցիք սմափեցուցած են Հայ - Հոռոմէական յարգելի առաջնորդ և. Ապտուլ-Լահն, որ այս անգամ հաստատուն հիմնաց վրայ զնել կաշխատի Խալագտերիցոց խնդիրը, Գիւղացիք կհաւանին, և. Ապտուլահ անցեալ շարթուը նէ մեկնած է աստի Պոլիս, յոյշանելով թէ յուսալից է, յաջողելու, Գիւղացիք առ այժմ ակնկառոյց կսպասեն իրենց նոր կղերին զալստեան.

— Մի քանի ամիս յառաջ, բողոքական եղած քրիստոնէի մը կինն աղջիկ զաւակ մը կծնի. կինն որ ճնշման տակ Բ'ողոքականութիւնն ընդունած էր, իր այրէն զազանի մեր եկեղեցին կղրէկ մկրտուելու, և անունը կղրուի «Հայկանուշ»։ Այրն երր կլսէ, կրակ կտրած տեղւոյս Միսիոնարաց կդիմէ, որը հետ խորհրդակցութեան կորոշեն կրկին մկրտուածել և կնքահայրութեամբ հօրն և այս անգամ մանկիկը կկոչուի «Ավաննաս», Հիմակ «Ավաննա», թէ Հայկանուշ։ Արդեօք Պատ. Միսիոնարներն օրինաց ո՞ր արամագրութեան համաձայն իրկեսամերութիւն ըլլին։

ՊԱՐՍԿԱՀԱՅՔ.

ՏԵՂԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԹԵՂԻԿԱ ՀԱՅԱՑ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ. *

Վ. Ա. Բ. Ա. Դ. Ա. Պ.

Հին հայաստանի Փայտակարան նահանգի հարաւային մասն է, որ այժմ կոչում է Պարտաղ, կամ ըստ Պարսից պաշտօնական կոչման «Պարագագաղ», թէկ Աստրապատականի մայրաքաղաք Թարիզին բաւական մօտ և նրա կենսական մի պիտոյքի (ածուխի) հայթայթիչ, սակայն բոլորտին անծանօթ է մնացել՝ աւչքից հեռացած, մորթից մոռացած։ Մեր Թեմակալ Առաջնորդները արժան չեն համարել այս բազմահայ վիճակն այցելել, որովհետեւ աշքատ է և ճանապարհները տաժանելի անցեալ ամրան միայն Առաջ. Տեղապահ Բարձր. Յ. Ա. Աստրաձեանը այցելեց ամրող Պարագաղը, որով և պատեհութիւն եղաւ Ճիշդ վիճակագրութիւն կազմելու։

Դարակացը գտնվում է Թաւրիղի հիւսիսային արևելքան կողմը՝ երեք օրուայ հեռաւորութեամբ, սահմաններն են՝ հիւսիսից Արաքսը, արեւելքից Մուղանի անապատը, որից բաժանվում է Գարսու գետով՝ հարավից Հասանօվայի և Ահարի գաւառները, արևուաբից Մարանդի գաւառը։ Դարագաղը ամրողապէս լեռնապատ է, թէե շատ բարձր գագաթներ չունի, բայց անհամար լեռնաշղթաներ տարբեր ուղղութեամբ իրար կտրատելով և միանալով կազմում են մի բարձրավանդակ, որ ծովից 6500 ոտնաչափ և աւելի բարձրութեւն ունի։ Այս լեռները ծածկուած են անտառներով, ամբողջ Ասրպատականում այսուեղ միայն կան անտառներ, որ անինայ կտրատվում են ածութիւ համար և պյունի։ որպէս զի վարելահող գառնան, Լեռներից բղուում են բազմաթիւ վտակներ որոնք թափուում են Արաքսը։ Նշանաւոր են 2ոլինի և Մարգանաղը և Քեալհէ Արարի գետերը։

Հանքային ջերմուկներով հարուստ է Քէրմանի գաւառակը։ Օդը ցուրտ է, խոնաւ, բարձրավանդակներում, որ հազիւ է աճում ցորենը։ Տառախուզը մշտական է, շատ զիւղեր շաբաթներով արելի երես չեն տեսնում։ Չորերը և գետաբերանները ձմրան բարեխառն են, իսկ ամրան սաստիկ տաք, այնպէս որ այսուեղ յաջող բուսնում է թզենին և նոնենին։

Դարագաղը հարուստ է երկաթի և պղնձի հանքերով, կայ նաև արծաթ, Պղնձի մի քանի հանքեր գետ շահագործուում են, ինչպէս Ասգամալի, Ագանի և Աղաղանի մօտ եղանեները։ Վարդաները յոյներ են, որ դործում են մի Անգլիական ընկերութեան հաշուով։ Հայերն եռ ժամանակով շահագործել են տուել և մի քանինը գետ հայի անուն են կրում՝ ինչպէս Ուէթ Խանի պղնձահանք և լուսական նորա այժմ բարձի թողի են արել այդ գործը, քանի որ Խանապարհների դժուարութենը և վարպետ հանքագործների պակասութիւնը արգելք է լինում։ Տեղացի հայ գարրիները երկաթի հանքը հալելով երկրագործական պիտոյից համար պէտք եղածին շափ երկաթ պատրաստուում էին բայց այժմ երբ ուստական երկաթը պատրաստի ստանում են, այլ ևս նեղութիւն քաշելու պէտք չեն տեսնում։

Անտառները հարուստ են կաղնի և տոլասի ծառերով, կայ նաև մոշի, հոնի, լոկյողի, կաղնի և լուսական մոշի ու հոնի մուտքանութեամբ բուսնում են շատ պտղասու ծառեր՝ կեռասի, սաւալորի, թզենի, նոնենի, թթենի. շատ լաւ յաջուում է խաղողը, Բարձրավանդակները զրկուած են պտղասու ծառերից։ մշակութեան հողի քիչութեան և օդի ցրտութեան պատճառով գիւղացիները չեն կարող իրենց բաւականացնող արմութիւ արտադրուի, այդ պատճառաւ Տզմարի և Մէլափարայի

բնակիչները ստիպուած են ամէն տարի մեծ աշխատանքով։ Հարից արմտիք բերել, Անելի ցանում են կորեկ, որ խոնաւութիւնից չի վախում։ կանայք զիւղերի մօտերքում մշակում են փոքր բանջարանցներ՝ վարունդ, Լօրի, սոխ գգում, քարտոֆիլ և միւս հասարակ բանջարներ։ Արաքսի հովում մեծ քանակութեամբ ցանում են կարմրագոյն բրինձ։

Անտառներում վայրենի կենդանիներից յայտնի է արֆը, որ ցանքերին և բանջարանցներին մեծ վնաս է հասցնում։ գիշերները հրացան ձեռքին պահպանութիւն անելու են ստիպուած գիւղացիները, որ առանց այն էլ իրենց շրաւականացող կորեկի արտը արջի կերակուր չգտանայ։ Դարագաղումն է Պարսից գահաժառանդի նշանաւոր որսատեղին, որ լիբն է ամէն տեսակ կենդանիներով։ Խիստ հսկողութեան տակ է և ուրիշներին արգելուած է որս անել։

Դարագաղը բաժանուած է և գաւառների (հայերի բնակած գաւառները), Նողմար, Մէլափարա, Մնձան և Քէրման, առաջին երկուսը բոլորովին լեռնոտ և անտառոտ են, ճանապարհներ երեկք չկան։ Հունձը կալասեղ բերում են շաբակով կամ ջրիով աշխարհի սկզբից սայլ չէ մտել այս երկիրը, մինչեւ անգամ մի քառ։ սաժեն տափարակ տեղ չկայ։ Մնձան, մանաւանդ Քէրման համեմատաբար փոքր գաշտեր ունին, հօղագործութեան արգիւնքը իրենց բաւականացնում է։ Քէրմանում անտառները բիշ են։

Հայերը բնակուած են բարձրավանդակներում, անմատչելի զարիվայրերում։ թուրքները ձորեր և հօվիտներն են բռնել, Հայերը զրադուած են երկրագործութեամբ։ քիչ անապահութեամբ և մեղուարուծութեամբ։ ածիսագործութիւնով քիչ են պարապուած, թուրքների մենաշնորհն է այս գիւղացիները կացնի փող անունով մի թեթև գումար տառով կարող են ուղածին շափ փայտ կոտորել, Հայ գիւղացիները պահում են բաւական ձի և ջորի, առանց ջորիների Դարագաղում ապրել անկարելի է։

Բնակիչներն են Հայեր, Թուրքեր, Ալալլահիներ, Փարափափախներ, Ըահսկաններ, որ ամառն այնտեղ են անցիացնուում։ իսկ ձմեռը Մուղանի անապատում Հայերը իրանց գրացիների հետ լաւ յարարութեան մէջ չեն, ինչպէս արջերից, նոյնպէս սոցանից միշտ զգոյշ են լինում և հրացանը ձեռքին պաշտպանուում։ այնուամենայնիւ սպանութիւններ և գողութիւններ անպակաս են։ 8—10 տարի առաջ Հայերն աւելի նեղութեան մէջ են եղել աւազակարարոյ պաների և խաների պատճառով։ ամէն Դարագաղիցից օրհնութեամբ է յիշում հանգուցեալ Ստեփաննոս Ապիսկոպոսի անունը, որ այդ ազգեցիկ աղաներից գլխաւորներին Թաւրիզ տանել տալով ահագին տուղանաց և բանտարկութեան է ենթար-

կել տւել, որով սանձաւել են և հայերի հետ սկսել են ակնածութեամբ քարուել, Քէյլանում մանա անդ անսահելի նեղութիւն էին տալիս ժողովրդին. Ստեփան եպիսկոպոսի օրով տեղացիները խիստ բողոքներ են հասցրել մինչև Թէհրան Շահին և յաջողել են այդ գաւառակը թուրք ազաների դերութիւնից ազանել. Ծրովարտակով Քէյլանի հառավախրութիւնը Հայոց է յանձնուած, այնուհետև Մելիք Սարգիսն եղել է կառավարիչ. երկու տարիէ ի վեր չնշին պատճառներով իրարու հետ կառի բռնուած լինելուն պատճառաւ վախ կայ, որ չնորհուած արտօնութիւնները ետ առնուին Հայերից.

Վարագաղի գիւղերը մեծաւ մասամբ տեղացի կամ Թաւրիզեցի թուրք խաների և մօլլաների սեպհականութիւնն են Հայոց Առաջնորդարանը գնել է նորմարում մի քանի գիւղեր

Դորաշէն * Հայաբնակ գիւղն ամրողջապէս

Խոթ թբքարնակ

Օդա Հայաբնակ ից երկու ազա

Խաշլու թբքարնակ ից *

Այս գիւղերի հասոյթը ստանում է Բրամեան ուսումնարանը, որ վարձու է տուել բոլորը 140 թուրմանով (280 ռուրլի) մի հայի որ Թաւրիզում նստած թուրք մուրարիներով հաւաքում է հասոյթները. այդ պատճառաւ և գիւղացիները հայ աղայ ունենալուն համար աւելի բարեխախտ չեն, Պարսկաստանցի նշանաւոր վաճառական Թուրմանեանցները, որոնց հայրենիքն է Վարագաղը, գնել են մի քանի գիւղեր, իրենց պապի ծննդաւագայր Աղան Մղկիթ և մի քանի թբքարնակ գիւղեր, վերջն ամիսներում գնել են նաև 8—10 գիւղեր, որով Վարագաղում ամէնից մեծ կալուածատերեր դարձաւ, Թուրմանեանցները 7 տարուց ի վեր իրենց հողերում եղած անտառները պահպանել են տալիս, ստանում գիւղացու բերքից տասնորդը միայն, մինչդեռ միւս գիւղատէրերը կէօր կամ երեք մասոց մի մասն են ստանում: Աղան գիւղի պետական 130 թուրման հարկից 100ը միայն ստանում և 30ը իրանք են լրացնում: Այս գիւղում շինչել են մի հիմնարան ամարանց, որի ստորին յարկը կինդրո նական ուսումնարանի յատկացնելու միտք ունին. եթէ այս նպատակն իրագործեն Վարագաղի լուսուրիչը պիտի գտանան, քանի որ ինչպէս պիտի տեսնենք ամրող Վարագաղը մտաւ որ խաւարի մէջ է:

Վարագաղում կայ միայն մի քանիք, նորաշէն գիւղի սահմաններում: Ա. Գէորգ անունով.

ի հարկէ Հայաստանի միւս վանդերի նմանութիւնը չունի: աւելի մատուռ կարելի է համարել, հրաշագործի համբաւ է վայելում: ամրող Վարագաղից մինչեւ անգամ Թաւրիզից հայեր ուխտի են զալիս, թուրքերն ևս յարգում են և չնայելով որ գուուր միշտ բաց է, կնքուած գանձնակին ձեռք չեն տայ, Այս գանձնակի հասոյթն ևս Թաւրիզիցիք իրենց ուսումնարանին են յատկացրել, առարկելով թէ իրենց հոգւմն է: Չնայած որ Վարագաղը հին հայաստանի մի նահանգն է համարվում: սակայն նախկին Հայոց ոչ մի հետք չի գտնուում այնտեղ, ոչ բերդի կամ վանքի աւերտիներ և ոչ էլ հոյակապ եկեղեցիներ: որքա արհասարակ իրենց շինութեամբ չեն զա ազանուում գիւղացոց միւս շինութիւններից, միայն Սարգու և Խանագեան գիւղերի եկեղեցիները քարաշէն են, Վարագաղում առաջները անշուշտ աւելի բազմաթիւի հայեր բնակութեան համար այստեղից գաղթաներ են սահմանակից Թուր նահանգները գաղթողներ ևս պահաս չեն:

Վարագաղը մտաւորապէս բացարձակ խաւարի մէջ է, մի քանի գիւղերում ուսումնարանի փորձեր եղել են: բայց չուտափ վերջացել, այժմ ուսումնարան կայ միայն Աղաղան գիւղում որ 41 տուն ունի և միայն 15 աշակերտ: Սարգուում ևս եղել է մի վարժարան: ինչպէս և Խանագեանում * երեք տարի մի համեստ բայց աշխատասեր երիտասարդ առանց ոչինչ վարձատրութեան կրթել է ժողովրդի զա ակները: Խնչպէս ասացինք Վարագաղի լուսաւորաւթեան գործը Թաւրմանեանցներից է սպասուում իրավանչիւր դաւառում առ այժմ մի ուսումնարան կը բաւականանայ: Զարմանալի են Վարագաղիցիները: բազմաթիւ են Թաւրիզի Հայոց և միտօնարաց վարժարանների մէջ կրթուող աշակերտները: բայց սոցանից և ոչ մին այլ ևս չի վերագրածել Վարագաղ: Քահանաները վերին աստիճանի տքէտ են, և ի նշպէս սպասել այստեղ ուսեալ քահանայ: Աենք հանգիպեցանք նոյն իսկ այնպիսի քահանաների, որ կարգալ չգիտեն: Ուրեմն զարմանալի չէ, որ Վարագաղիները խիստ աեւրգապաշտ են, մի կարգ սօսի ծաւերին մեծ յարց են տալիս, գիւղերները տակին ճրագ են վասուու, բարձրաթաթօշը յարգում են պաշտելու չափ՝ չգիտեմ նրա մէջ ինչ բարի ոգի բնակուուծ կարծելով:

Ընդ անկերութիւններ չուս գաւառներ վրայ: Ընդհանրապէս Հայերն ապրում են եկոների լանջերում: ամուր գիւղերի վրայ, ուր հողը պահաս է

* Թաւրիզում վախճանած Մհացական Տէր Յակովիքին, Թուրմանեանց վեստան, կամկէ և 200 րուրման Խանագեանի ուսումնարանին: կիմր 8 Աղիզ: խոսացաւ այդ դումար այն լայի վերածելու ու ուկուից մի ուսուցիչ պարբերութիւններ եւ շինուալ էլ իր հաշուույն նորողելու է:

* Նորաշինն առաջ Ա. Գեղարքայ վանի սեպհականուրիւնն է եղել, բայց անհոգութեամբ Թէրինի մեռնի և անցել: Թաւրիզի առաջնուեղի շանցալ Հայոց իրաւունքը վերաբառառուեցաւ:

և անտառում, անտառների խոսով կարող են պահանջել բազմաթիւ հօտեր, բայց ամենահարուստ գիւղ 700 այծ և ոչխարից առելի չունի. սորա պատճառը թէ աղքատութիւնը և թէ անապահովութիւնն է, Արհեստներին գալով միայն դարրիններ կան. Քէյվանում հրացանագործի և ոսկերչի մի մի խանութ է գտնուում: Խանյայք պարապում են ոստայնանկութեամբ, քիչ շերամապահութեամբ, գործում են կապերաներ, մազէ փալասներ, կտաւ, չարսու, շալ և երբեմն գորգեր, օգնում են աղամարդոց գաշտային աշխատանքին, հնձում են կալ են անում, պահում փոքրիկ բանջարանցներ: Դարագցի կինը վերին աստիճանի բարոյական է, երեսը չի ծածկում անձանով տղամարդից:

Քէյվանը զուրկ է անտառներից, հողերը բաւականացուցիչ են, բերքը կերակում է զիւղացիներին: Բացի երկրագործութիւնից՝ պարապում են և շերամապահութեամբ թթենիների պառողը գործ են դնում օդի պատրաստելու որ քիչ քանակութեամբ Դարաբուղ են արտահնառում: բայց մեծ մասը իրանք են խմում: Քէյվանից զատ միւս գաւառներում ոգելից խմիչք չի գործած գումար որպէս շերաբ. Ժեներն էլ սովորական չէ: Խմելու ունակութեան շնորհի Քէյվանցիները վարդու բարբով խիստ տարբերում են միւս գաւառներից:

Դարագաղցիները մեծ թւով պանդիտումեն Առևսաստան աւելի Ծոյշուայ և մօտիկ գաւառները, սակայն երկար տարիներով չեն մնում, դարնան մեխողները աշնան վիրագտառում են, երթեւեկութիւնը կատարուում է Արաքսի Խուտավիլը իւմուրչով:

Դարագաղի չարս գաւառներից Պամար ունի 8 զիւղ, Մէլափարա 6, Մնջուան 4, Քէյվանը 9, բոլորն էլ զուտ հայարնակ ամէնից մեծ զիւղն է Սղն 118 տուն և Խանագեահ 91 տուն: Այս գաւառների գործակալութեան պաշտօնը վարում է Խանագեահի Տէր Տաճատը: որ իր աշխարհական ժամանակ Ազամ անունով յայտնի էր: Համեմատելով միւս քահանայից, ծխակատարութեան բաւական վարժ է, Թաւերիզի Առաջնորդարանից 4 տարի յառաջ այցելու հովուի պաշտօնով այստեղ էր ու զարկուած ժամանակաւորապէս Բաղունի Յովհաննես վարդապետը: Թաւերիզի Ամերիկացի միսիոնարները երբեմն այցելում են և թուրքերէն լեզուով քարոզ տալիս ու Աւետարան բացատրում: բայց Դարագաղցին Ատէր (քահանայ)ից զատ կրօնի պաշտօնեայ չի ճանաչում: Դարագաղցի խիստ սրամիտ և լնդունակ ժողովուրդ են: Ճնյաց որ Թուրիզ գալիս բոլորովին աղքատ և անուռ են լիւնում: բայց և այնպէս մի քանի տարի մնալով յառաջադիմում են: այսօր Թաւերիզում աշքի լնկնող բոլոր մարդիկ, կարելի է ասել: Դարագաղցիներ

են Հին Թաւերիզցիք առևտրական ասպարէզից տեղի տալով արհեստների մէջ աւելի վարժ են:

Դարագաղցիք խօսում են խիստ դժուարահասկանալի մի բարբառ: Նման մի քիչ Դարագաղցի լեզուին: Ազաղանի ուսուցիչը իր աշակերտաց հասկանալու և հասկացնելու համար ստիպուած է եղել նախ թուրքերէն խօսել:

ԱՐԴ Ա Բ Ի Լ

Թաւերիզից 5 օրուայ Ճանապարհ գէպի արեւելք մի լնդաբիձակ գաշտավայրում շինուած է Արգարիկ քաղաքը: որ նշանաւոր է իր հնութիւններով: Գաշտի արևմտեան հիւսիսային կողմը բարձրանում է Սավալան լեռը իր 12,197 ոսք բարձր ձիւնապատ գագաթով: այս լեռան ստորոտում կան բազմաթիւ հանքային ջրի աղբիւրներ: Արգարիկի գաշտը ծովից բաժանվում է Գիլանի անտառապատ լեռնաշղթայով: ծովի և անտառի մատաւորութեան պատճառով ողը խիստ խոնաւ է: ձմեռը մեղմ իսկ ամառը բարեխառն: Քաղաքն ունի շատ հնութիւններ, այստեղ են Աէֆեզի ցեղի նախահայր Շէյխ Աափիէդզին Խաչակի և իր եղոր Շահ Խամայէլի գերեզմանները, որոց վրայ կառուցաւած է մի հրաշալի մզկիթ որ այժմ Շէյխի է կոչվում: Խրկուգերեզմաններն են՝ Յ արշին երկայնութեամբ, 2 արշին բարձրութեամբ, $1\frac{1}{2}$ արշին լայնութեամբ անփութ փայտից շինած և թանկազին ծածկութով պատճառ, իրանց քանգակներով: ոսկէ, արծաթէ, փղոսկրէ, սատափէ և փերուցէ զարգելով արուեստի մի հրաշալի գործ են: Մզկիթի ինչպէս և գերեզմանների, խորանաձեւ կողմնակի շինութեանց դռները դրսից արձաթապատ, ներսից ոսկեպատ են, փղոսկրեայ և ճենապակեայ ամենանուրը արձանագրութիւններով զարգարած: Մի մեծ սրահ լիբն է մետաղէ, ճենապակիէ և հողէ հին ամաններով, որոնք նախկին ուխտաւորների բերած նուրիների մնացորդներ են: մի ուրիշ սրահ ձեռապիւրների է յատկացրած: Պատմում են որ 1827 թուին, երրուսունները գրաւեցին այս քաղաքը, ձեռապիւրների մի կարևոր մասը Պետերբուրգ տարան, այն օրից ի վեր պարսիկ ժողովրդեան համար մեծ ուխտաւուղի լինելուց գաղաքել է, որպէս շետեւ պղծուած է համարուում գետավուրներից:

Հատ Եւրոպացի Ճանապարհորդներ այցելել և պահապան սէլիտին կաշտուլով հնութիւններ են տարել, գեռ երկու տարի առաջ մի գործ ծախուել էր 1500 սկիով սէլիտն այս միջոցով ահազին հարցութեան տէր է եղել: Թէև գարերի ազգեցութիւնը հետպհետէ եղծուում է այս շէնքը, գողութեամբ կամ անհոգութեամբ կարցնուց են շատ բաներ: բայց դարձեալ այս գրութեամբ ևս հնութեանց մի անզուգական թանգարան կարող է համարուել: Երկու գերեզմանների վրայ գլութ-

Ներ կան յախճապահեայ գոյնցոյն նկարներով՝ որոնց ծայրը ունի է ։ Շահի գերեզմանի գմբեթի ծայրին տնկուած է և ուսում Մզկիթի գումարում և պարտիզում Պարսիկ թագաւորների և շաաւ աւագանեաց գերեզմաններ կան ։ Քաղաքին կից արեւելեան հարաւային անկիւնում՝ շինուած է բերդը, հողէ կրկին պարխազներով, որ քիչ քիչ աւերակ է գառնուում։ Այստեղ է կառավարչի բնակարանը, բանտը՝ ուր ուղարկուում են Պարսկաստանի այն յանցաւորները, որոնք ո և է պատճառով չեն զբլիւատուում։

Արգարելի շուրջը աւերակներ շատ են որից երեսում է, որ այս քաղաքը մի ժամանակ շատ նշանաւոր և ընդարձակ է եղել, այժմ ընկած զբութեան մէջ է, տուները հողաշեն վաճառանոցը աղբատ, արտահանութեան ոչ մի բերք չունի. եթէ մի քիչ կենդանութիւն կայ՝ այն էլ Ասդացանահանդատին մօտ դանուելուց է։

Կեխանի լեռնաշղթան մի կիրճ ունի, որ սկսելով Կասպից ծովուում է գէպի արեւուուք մինչև 40 վերսու, գծուար է երեւակայել այսպիսի մի տաժանելի ճանապարհ, որ Կասպից ծովի և Ասրափատականի հազորդակցութեան միակ միջոցն է. Կրծից հօսող գետակը բաժանուում է Յուսուց և Պարսից սահմաններն, մի կողմը թողնելով Գիւն և միւս կողմը Թալիչ, խիտ և կուսական անտառ, գահավեժ ժայռերը, ամեն քայլափոխին արգելք են յարուցանուում. ձիերը և ջորիները միայն կարող են մեծ գժուարութեամբ այս ճանապարհով երթեւել. այդ պահանուա Ուրմիից, Մարաղաից և Թարիզից եկած ուղտի ահագին կարա անները ստիպուած են իրենց րեսները Արգարելում թողնելու, բանց քիչ քիչ փոխագրուում է ծովիզերը. Առևսական ապրանքները, Ասրափանից և Քաղուից եկած Ասդարա նաւահանգստով Արգարիլ են բերուում և այնտեղից տարածուում են Ասրափատականի միւս գաւառները։

Արգարելի հայերը 30 տուն են միայն, մնացեանի բոլորեքեան թուրք են և մի քանի հրեաներ, Հայերը եկել են Թաւրիզից և զրազգում են առետրով. Ընտանիքով բնակողներից բացի կան նաև միայն առետրի համար եկած գործակատարներ, Աւենին եկեղեցի, մի պանդուխա քահանայ, որին վըճարում են 300 բուրդի առճիկ, մի ուսումնաբան, նաև թատերական մի փաքրիկ սրահ. մի տարի է որ ուսուցիչ չունին։

Թուրքերը կարելի է ասել Հայերի հետ լաւ յարարելութեան մէջ են, թէև խիստ մոլեւանդ, առետրով և մեծ մասամբ չարվատարութեամբ են զրազած։

Արգարիլի Հայերն ունեցել են նաև մի փոքր

Վրագարան-լնիթերցարան, ուր մինչև 400 զերք է եղել, բայց անխնամ մնալով բարեխիղճ լնիթերցաղներն այդ զբքերը իւրացուցել են մի քանի երիտասարգներ սկսել էին կրկին ուշադրութիւն գարնել և հաւաքել եին 150 իշտի զերք։

Միր միշած տեղերից բացի Ասրափատականուում ուրիշ տեղ աչքի լնինող թուուզ Հայեր չկան, միայն Յօմայում, քիւրդիստանի զանազան տեղերում տուն տուն, հատ հրուածներ կան, որովք բոլորը միասին մօտաւորապէս 50 տուն հաշուել կարող ենք. քանի որ առ այժմ գոնէ դրանց ճիշտիւը իմանալու ոչ մի միջոց չկայ։

Կոքա որ փորձել են, զիտեն թէ Ասրափատականի ուկս խաւար ուշխարհում վիճակագրութիւններ կատարելներ արշակուար է, կատարութիւնը այդ մասին երբեք չի մտածել. Ազգային Առաջնորդարանի կողմից շատ անգամ պատուիրուած է եղել Գործակալներին, քահանաներին և երեցիներին, մինչև անգամ մատեան է ուղարկուել, որպէս զի մկրտութիւն, ամուսնութիւն և մահը նշանակեն եկեղեցւոյ հաշիւների հետ մէկ տեղ, բայց համարձակ կարող ենք ասել որ ոչ մի տեղ գործադրութիւն չեն գտնել, միայն Թափրէզում պահպամ են այդ հաշիւները, այն էլ ոչ կանոնաւոր։

Մենք յաւակնութիւն չունենք ոյս փոքր աշխատութիւնը իր անսխալ և կատարեալ գործ առաջարկելու, քանի որ վիճակագրական թիւերը միշտ փոփոխութեանց ենթակա են, Մենք կատարեցինք, ինչ որ կարող եինք բաղմատեակ գժուարութիւնների դէմ կոռւելով։

Պատրաստուած է նաև Ասրափատականի մի ընդարձակ աշխարհացցց քարտեղ, ուր հայրենակ տեղերն աւելի մանրամասնութեամբ են նշանակուած, եթէ հրատարակելու գիւրութիւն լինի, այս երկի տեղազրութեան վրայ աւելի լցո պիտի սփուէ. *

Այս յաւազ բերենք վիճակագրուկան թուերը՝ իւրագանցիւր գաւառի առանձին։

* Այս տոփեր գրադի է Պ. Ար. Յակոբիուն, որի վերայ և ծանրացած եղել զիմաւոր աշխատութիւնը մեր հրատարակած և կազմադիր կազմելու համար. Այս յանի մասերում, որ Պարագապի վիճակագրութիւնը կազմելու, օգնել է նորան Գ. Բժշկակ։

Ա ԶԴԱՀԱՄՄԱՐ

Ա. ԹԱՎԻՔԻՉ.

| ՏԵՂԻ ԱՆՁԻՆԵՐ | ՀԱՅԱ | ԱՐԵՎԱՐ | ԽՈՎԱԿԱՆ | ԵՐԱԳՈՒՄԱՐ | ԵԼԿՐԻԳԻ | ՄԱՍԻՆԱՅԻՆ | ԽՈՎԱԿԱՆ | ԱՐԵՎԱՐ |
|--------------|------|--------|---------|-----------|---------|-----------|---------|--------|
| Թագիրեղ | 580 | 1380 | 1470 | 2850 | 2 | 5 | 6 | 23 680 |
| Մուժումբար | 116 | 364 | 332 | 696 | 1 | 1 | 1 | 0 0 |
| Ելամանուր | 36 | 111 | 105 | 216 | 1 | 1 | 0 | 0 0 |
| Սէօհրեղ | 10 | 35 | 31 | 66 | 1 | 0 | 0 | 0 0 |
| Գումար | 742 | 1890 | 1938 | 3828 | 5 | 7 | 7 | 23 580 |

* Բ. ԱՐԵՎԱՐ

| | | | | | | | | | |
|------------|-----|-----|-----|------|---|---|---|---|----|
| Մաքույթիկը | 78 | 209 | 166 | 375 | 2 | 1 | 1 | 0 | 0 |
| Քէշիշ Թէփէ | 67 | 216 | 177 | 393 | 1 | 1 | 1 | 1 | 30 |
| Գարաքիլիսէ | 29 | 122 | 101 | 223 | 0 | 1 | 0 | 0 | 0 |
| Գարաշամ | 35 | 120 | 115 | 235 | 1 | 1 | 0 | 0 | 0 |
| Գումար | 209 | 667 | 559 | 1226 | 4 | 4 | 2 | 1 | 15 |

Գ. ԽԵՑ.

| | | | | | | | | | |
|--------------|-----|-----|-----|------|---|---|---|---|----|
| Խոյի Ազատաբձ | 94 | 265 | 252 | 517 | 2 | 1 | 1 | 1 | 30 |
| Ալյոսիսը | 80 | 266 | 214 | 480 | 1 | 1 | 0 | 0 | 0 |
| Մահազան | 30 | 105 | 90 | 195 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Աշու | 42 | 142 | 120 | 262 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Փէսա | 15 | 50 | 45 | 95 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Դիզէ | 8 | 26 | 24 | 50 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Թաղէցէնս | 7 | 25 | 20 | 45 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Քօթուր | 32 | 110 | 82 | 192 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Գումար | 308 | 989 | 847 | 1836 | 8 | 2 | 1 | 1 | 30 |

Դ. ԱՐԵՎԱՐ

| | | | | | | | | | |
|-------------|------|------|------|------|----|----|----|----|-----|
| Հափթվան | 325 | 975 | 854 | 1829 | 1 | 3 | 1 | 4 | 120 |
| Փայաճակ | 238 | 683 | 601 | 1254 | 1 | 2 | 1 | 2 | 65 |
| Մահրամ | 180 | 473 | 449 | 922 | 1 | 2 | 1 | 1 | 58 |
| Գալասար | 70 | 264 | 243 | 507 | 1 | 1 | 1 | 3 | 42 |
| Ապանա | 74 | 237 | 193 | 430 | 1 | 2 | 1 | 1 | 35 |
| Համբակերան | 46 | 160 | 131 | 291 | 1 | 1 | 0 | 0 | 0 |
| Սալիս | 109 | 323 | 306 | 629 | 1 | 2 | 1 | 1 | 35 |
| Սարսալիսիկ | 81 | 309 | 277 | 586 | 1 | 1 | 1 | 1 | 32 |
| Հին—քաղաք | 70 | 278 | 248 | 526 | 2 | 1 | 1 | 1 | 25 |
| Վախճանան | 46 | 193 | 144 | 337 | 1 | 1 | 0 | 0 | 0 |
| Կղլճու | 41 | 146 | 125 | 251 | 1 | 1 | 1 | 1 | 12 |
| Գառա դան | 40 | 138 | 130 | 268 | 1 | 1 | 0 | 0 | 0 |
| Քէպիկ | 28 | 110 | 90 | 200 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Քէպաշանն | 25 | 77 | 73 | 150 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Այսն | 22 | 87 | 54 | 141 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Գէլիշէ | 23 | 72 | 72 | 144 | 1 | 1 | 0 | 0 | 0 |
| Խոսրովայ | 23 | 65 | 52 | 117 | 1 | 0 | 1 | 1 | 15 |
| Վայսիկ | 14 | 49 | 44 | 93 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Ըլիթանաւու | 21 | 61 | 46 | 107 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Ճարս | 12 | 39 | 27 | 66 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Քէօչէմիշ | 12 | 42 | 38 | 80 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Իւլս | 14 | 33 | 28 | 61 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Ցէլիճուկ | 9 | 38 | 34 | 72 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Բակուտ | 8 | 42 | 39 | 81 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Փոխ. Գումար | 1531 | 4874 | 4298 | 9172 | 23 | 19 | 10 | 16 | 439 |

* Մաքույթիկը մարդաբանակար պատրաստէ և Արծակի կ. Դատեան որից եւ օգտուել են:

** Համբակերանին 97-ի տեսան դկացիր պատ-

ՀԵՐ. ԱՐԵՎԱՐ

| ՏԵՂԻ ԱՆՁԻՆԵՐ | Տար | ԱՐԵՎԱՐ | ԽՈՎԱԿԱՆ | ԵԼԿՐԻԳԻ | ՄԱՍԻՆԱՅԻՆ | ԽՈՎԱԿԱՆ | ԱՐԵՎԱՐ | Աշու |
|--------------|------|--------|---------|---------|-----------|---------|--------|--------|
| Համբակերան | 9 | 33 | 29 | 62 | 1 | 0 | 0 | 0 |
| Հալիսապար | 7 | 27 | 22 | 49 | 1 | 0 | 0 | 0 |
| Շատան | 5 | 14 | 11 | 25 | 0 | 0 | 0 | 0 |
| Ըստամայիշ | 2 | 8 | 5 | 13 | 0 | 0 | 0 | 0 |
| Գիւղիպան | 3 | 12 | 10 | 22 | 1 | 0 | 0 | 0 |
| Դարաբուլանց | 12 | 50 | 34 | 84 | 1 | 0 | 0 | 0 |
| Գումար | 1569 | 5018 | 4409 | 9427 | 27 | 19 | 10 | 16 439 |

Ե. ԱՐԵՎԱՐ

| | | | | | | | | | |
|---------------|-----|------|------|------|----|----|---|---|-----|
| Ա. թամբաւառ | 45 | 116 | 114 | 230 | 1 | 1 | 1 | 1 | 30 |
| Ճէմալաւառ | 5 | 18 | 14 | 32 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Կէլսապատ | 120 | 370 | 290 | 660 | 1 | 2 | 1 | 1 | 25 |
| Գարակըզ | 20 | 70 | 60 | 130 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Գամիկի ըլկու | 20 | 60 | 62 | 122 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Բաղլթէօ | 40 | 116 | 104 | 220 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Զէյսալու | 6 | 17 | 16 | 33 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Դ. պատու զ | 19 | 58 | 48 | 106 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Խանրաբախան | 20 | 60 | 55 | 115 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Խախչենթէփէ | 75 | 260 | 228 | 488 | 1 | 4 | 1 | 1 | 30 |
| Ըգու | 8 | 26 | 19 | 45 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Սըրփիւրզան | 12 | 30 | 36 | 66 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Դարամալու | 21 | 58 | 52 | 110 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Գարակէօզ | 8 | 19 | 23 | 42 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Էրի աղաճ | 40 | 124 | 126 | 250 | 1 | *2 | 0 | 0 | 0 |
| Ըիստարաս | 20 | 60 | 55 | 115 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Եսարու | 35 | 106 | 104 | 210 | 4 | 1 | 0 | 0 | 0 |
| Թահճայ | 105 | 325 | 315 | 640 | 1 | 1 | 1 | 1 | 20 |
| Դիկէէ | 25 | 70 | 67 | 137 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Ազջա Գալէ | 10 | 26 | 32 | 58 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Թէքելու | 12 | 38 | 37 | 72 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Խանինան | 2 | 6 | 5 | 11 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Թասմանալու | 10 | 34 | 32 | 66 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Սարաճու կ | 1 | 4 | 3 | 7 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Հ. մըրտլարամբ | 17 | 60 | 62 | 112 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Համաքի | 5 | 17 | 15 | 32 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Ցէլէքու | 14 | 41 | 39 | 80 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Հարրազզ | 24 | 60 | 65 | 125 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Գումար | 739 | 2239 | 2075 | 4314 | 17 | 11 | 4 | 4 | 105 |

Զ. ԲԱՐԵՎԱՐ

| | | | | | | | | | |
|-------------|-----|-----|-----|-----|---|----|---|---|---|
| Բաբառի | 50 | 170 | 155 | 325 | 1 | *2 | 0 | 0 | 0 |
| Բէլոնէժ | 16 | 53 | 47 | 100 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Գարաբարի | 25 | 78 | 67 | 145 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Դիղամալանց | 35 | 100 | 92 | 192 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Փախ. գումար | 123 | 401 | 361 | 762 | 3 | 2 | 0 | 0 | 0 |

առողջ սփառուեցան միջ մասամբ դիւղից փախարէ 8 հոգու կարուս տարվի այժմ աւգառուած են նրան խաղացում եւ շարու իրենց ենքը կը միւրացանան, երի պաշտամնութիւն գտնէն:

* Բահճանմեներն մինչ Բարակեպուամն են:

* Միի Իի աղաճի եւ միւսու գաղական խահճայ են:

ՀԱՅ: ԲԱՐԱՆԴՈՒԶԻ.

Շաբաթականի.

Բ. ՄԻԾԱՓԱՐԻ

| ՏԵՂԻ ԱՆՑԻՆ | Տար | Արտկան | Իդական | Եղագացման | Եղագացման | Կահանացման | Պատրաստման | Աշակերտության |
|---------------|-----|--------|--------|-----------|-----------|------------|------------|---------------|
| Փոխականութեան | 123 | 401 | 361 | 762 | 3 | 2 | 0 | 0 |
| Թամանթեար | 30 | 85 | 81 | 176 | 1 | 0 | 0 | 0 |
| Կորպաշէն | 12 | 35 | 36 | 71 | 0 | 0 | 0 | 0 |
| ՍՀաթլու | 8 | 24 | 26 | 50 | 0 | 0 | 0 | 0 |
| Սարդառութ | 20 | 68 | 62 | 130 | 1 | 0 | 0 | 0 |
| Սարալան | 5 | 18 | 16 | 34 | 0 | 0 | 0 | 0 |
| Քիւքէ | 5 | 16 | 12 | 28 | 0 | 0 | 0 | 0 |
| Գումար | 203 | 657 | 594 | 1251 | 5 | 2 | 0 | 0 |

Է. ԱՅԼԵԴՈՒԶԻ.

| | | | | | | | | | |
|-------------|-----|-----|-----|-----|---|---|---|---|---|
| Ասղագէջ | 46 | 131 | 123 | 254 | 1 | 1 | 1 | 0 | 0 |
| Զայեանէ | 5 | 19 | 17 | 36 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Կէօրնավայ | 8 | 16 | 16 | 32 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Քարվանսարաց | 3 | 14 | 12 | 26 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Թօփչավայ | 6 | 26 | 20 | 46 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Րախտանէ | 9 | 27 | 24 | 51 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Տիւշտ | 6 | 19 | 18 | 37 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Մէծէզեառ | 30 | 88 | 78 | 166 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Քիօհէ | 7 | 22 | 21 | 43 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Գումար | 120 | 362 | 329 | 691 | 3 | 2 | 1 | 0 | 0 |

Ը. ԱՕԳԱՆԱ ԲՈՒԼԵԳ.

| | | | | | | | | | |
|--------------|----|-----|-----|-----|---|---|---|---|---|
| Սօվունքութագ | 12 | 34 | 22 | 56 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Դարսաւթ | 30 | 96 | 82 | 178 | 1 | 1 | 0 | 0 | 0 |
| Լաճ | 4 | 13 | 14 | 27 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Քեարլարզափան | 8 | 19 | 24 | 43 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Գումար | 54 | 162 | 142 | 304 | 2 | 1 | 0 | 0 | 0 |

Թ. ՄԻԱՆԴՐԻԱՆ.

| | | | | | | | | | |
|-------------|----|-----|-----|-----|---|---|---|---|---|
| Միանգութեար | 16 | 41 | 37 | 78 | 1 | 1 | 0 | 0 | 0 |
| Խէօթթէփի | 3 | 9 | 7 | 16 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Գարս վերան | 6 | 24 | 15 | 39 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Թաղվարաստ | 27 | 68 | 87 | 155 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Գարսչալ | 1 | 5 | 3 | 8 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Գումար | 53 | 147 | 149 | 296 | 2 | 1 | 0 | 0 | 0 |

Ժ. ՄԵՐԱՎԱՐ.

| | | | | | | | | | |
|-----------|-----|-----|-----|-----|---|---|---|---|----|
| Մարտա քաշ | 178 | 479 | 359 | 838 | 1 | 1 | 1 | 1 | 45 |
| Քերպիվայ | 5 | 16 | 9 | 25 | 1 | 0 | 0 | 0 | |
| Խօհամիք | 8 | 17 | 16 | 33 | 0 | 0 | 0 | 0 | |
| Գումար | 190 | 512 | 384 | 896 | 2 | 1 | 1 | 1 | 45 |

ԺԱ. ԳԱՐԱԳԱՎ.

Ա. ԳԵԶՄԱՐԻ.

| | | | | | | | | | |
|--------------|-----|------|------|------|---|---|---|---|----|
| Աղազան | 41 | 190 | 136 | 326 | 1 | 1 | 1 | 1 | 16 |
| Կրկիվդն | 51 | 169 | 142 | 311 | 1 | 1 | 0 | 0 | 0 |
| Դ. Համի | 29 | 99 | 75 | 174 | 1 | 1 | 0 | 0 | 0 |
| Սարգու | 44 | 134 | 127 | 261 | 1 | 1 | 1 | 0 | 0 |
| Խանազեան | 91 | 298 | 245 | 543 | 1 | 1 | 1 | 0 | 0 |
| Գ. Ա. Լուսիք | 31 | 95 | 96 | 191 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Կորպաշէն | 41 | 128 | 114 | 242 | 1 | 1 | 0 | 0 | 0 |
| Օլու | 30 | 117 | 105 | 222 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Գումար | 358 | 1230 | 1040 | 2270 | 8 | 6 | 3 | 1 | 16 |

Շաբաթականի.

Բ. ՄԻԾԱՓԱՐԻ

| ՏԵՂԻ ԱՆՑԻՆ | Տար | Արտկան | Իդական | Եղագացման | Կահանացման | Պատրաստման | Եղագացման | Ինքնական | Ուսուցիչի | Աշակերտության |
|------------|-----|--------|--------|-----------|------------|------------|-----------|----------|-----------|---------------|
| Մկենթ | 23 | 68 | 67 | 135 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Ազան | 49 | 165 | 146 | 311 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Քլարտ | 24 | 74 | 58 | 132 | 1 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Կեպագուտ | 21 | 86 | 77 | 163 | 1 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Կնկեղչտ | 24 | 79 | 60 | 139 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Միքամի | 12 | 31 | 35 | 66 | *1 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Գումար | 153 | 503 | 443 | 946 | 6 | 2 | 0 | 0 | 0 | 0 |

Գ. ՄԻՋԱՎԱՐ.

| | | | | | | | | | | |
|------------|----|-----|-----|-----|---|---|---|---|---|---|
| Ահանզ | 13 | 53 | 40 | 93 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Քարտուլութ | 23 | 92 | 84 | 176 | 1 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Ամապուլ | 30 | 104 | 75 | 179 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Վինա | 24 | 74 | 60 | 134 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Գումար | 90 | 323 | 259 | 582 | 4 | 1 | 0 | 0 | 0 | 0 |

Դ. ՔԵՑՎԱՐ.

| | | | | | | | | | | |
|------------|-----|------|-----|------|---|---|---|---|---|---|
| Արզըն | 118 | 393 | 280 | 673 | 1 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Արզոն | 29 | 103 | 77 | 180 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Ահմանն | 10 | 47 | 38 | 85 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Կորուչն | 16 | 59 | 45 | 104 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Աշրափ | 12 | 42 | 39 | 81 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Դուկուլութ | 33 | 96 | 84 | 180 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Բերդին | 40 | 162 | 144 | 306 | 1 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Բերդին | 40 | 114 | 98 | 212 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Սիւրին | 33 | 112 | 97 | 209 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Գումար | 331 | 1128 | 902 | 2030 | 9 | 2 | 0 | 0 | 0 | 0 |

ՀԱՄԱՀՈՒՄԱՐ ՎԻՃԱԿԱՑՈՅՑ

ԱՏՐԱՄԱԿԱՆԻ ՀԱՅՈՑ.

| ՏԵՂԻ ԱՆՑԻՆ | Տար | Արտկան | Իդական | Եղագացման | Կահանացման | Պատրաստման | Եղագացման | Ինքնական | Ուսուցիչի | Աշակերտության |
|-------------|-----|--------|--------|-----------|------------|------------|-----------|----------|-----------|---------------|
| Թամարիդ | 4 | 742 | 1890 | 1938 | 3828 | 5 | 7 | 723 | 580 | |
| Մարտ | 4 | 209 | 667 | 559 | 1226 | 4 | 4 | 2 | 1 | 30 |
| Խոյ | 8 | 308 | 989 | 847 | 1836 | 8 | 2 | 1 | 1 | 30 |
| Մարմաս | 30 | 1569 | 5018 | 4409 | 9427 | 27 | 19 | 10 | 16 | 439 |
| Ուրմի | 28 | 739 | 2239 | 2075 | 4314 | 17 | 11 | 4 | 4 | 105 |
| Առյուղութ | 11 | 203 | 657 | 594 | 1251 | 5 | 2 | 0 | 0 | 0 |
| Առյուղութ | 9 | 120 | 362 | 329 | 691 | 2 | 2 | 1 | 0 | 0 |
| Սավուրութ | 4 | 54 | 162 | 142 | 304 | 2 | 1 | 0 | 0 | 0 |
| Միանդութ | 5 | 53 | 147 | 149 | 296 | 2 | 1 | 0 | 0 | 0 |
| Մարազ | 3 | 190 | 512 | 1384 | 896 | 2 | 1 | 1 | 1 | 45 |
| Միգրատ | 8 | 358 | 1230 | 1040 | 2270 | 8 | 7 | 3 | 1 | 16 |
| Միգրատ | 6 | 153 | 503 | 443 | 946 | 6 | 2 | 0 | 0 | 0 |
| Մարդութ | 4 | 90 | 323 | 259 | 582 | 4 | 1 | 0 | 0 | 0 |
| Միգրատ | 9 | 331 | 1128 | 902 | 2030 | 9 | 2 | 0 | 0 | 0 |
| Արյուղի | 1 | 31 | 120 | 100 | 220 | 1 | 1 | 1 | 0 | 0 |
| Զանազանել | — | 50 | 140 | 135 | 275 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Համապ. աշու | 154 | 5200 | 16087 | 14503 | 50592 | 102 | 65 | 50 | 47 | 1245 |

* Ակնեղեցին աւերանդ:

Այսպէս ու թեմն հայերը Առաջատականում ընկածում են 134 առարեք տեղերում, որից միայն 8-ը բազմաք և 126-ը զեղ առանց հաշուելու Սօմացի Քարանգուղ գաւառների և այլ տեղերի մէջ սուն տուն գտնուածները: Քաղաքներում ապրում են 1043 տուն 5198 բնակչով, միջին հաշուով մի շնանիք բաղկացած է 5 անձից, մինչդեռ զեղ գիւղերում 6 ից: Ամէն տեղ առական սեռ իզմանից աւելի է, բացառաւթիւն է կազմում միայն Թալքիզը, որը իդականներ 90 ալ աւելի են: Գիւղերում ապրում են 4151 տուն հայեր 25194 բնակչով: որոց 13432 ը առական, իսկ 11762 ը եղանակ: ամենով Առաջատականում աբական սեռ աւելի է իդականներ 1782 ալ:

Առաջատականում կան 63 բահանաներ, որից առաջանութեամբ ազէտ, ամեն մի քահանան ունի միջին հաշուով 83 տախ: Զորս վանքեր, որոց Դէրիք Ս. Առաջատականութիւնը աւերակ է գարձել, * Պարագազի ո, Գէորգը առանց միարանի, Արտազի ո, Թաղէս առաքեալը և Քարաշամի ո. Սունիանար անինում են մ'սացել: 102 եկեղեցներ կան, բայց Առագազի 27 եկեղեցներց 23 ը հազիւ կարելի է եկեղեցի համարել:


Ներկայ 1898 թ. ին Առաջատականում եղել է 30 ուսումնարան որոց 4 ը առ անց ուսուցչի, ու թեմն իսկապէս 26 ուսումնարան 47 ուսուցչի, եթէ դուրս դանք Թալքիզի 6 ուսումնարները (2 աղքարց, 2 աղջկունց, 2 մանկական պարուէզ, կամ նոյնակո 2 արհեստանոց աղջկանց կար ու ձեկ որ մենք ուսումնարան չենք հոգուել) իրենց 23 ուսումներով և 580 աշակերտներով կանենանք հետեւեալ թուերը, որ պերճութու աղքարց են Առաջատականի մասս որական վեճակի, 231 առանց վրայ գալիս է 1 ուսումնարան, 7 առանց մի աշակերտ, կամ 42 անձից մին միայն ուսումնագ է: Իսկ Թալքիզում միջին հաշուով մի ծուխ ու սանուղ է տալիք:

Առաջատականում կայ միայն մի միջնակարգ վարժարան, Թալքիզի Արամեան ուսումնարանը, որ ունի մինչեւ 4 ըդ գասարանը, և 4 երկուական ուսումնարան՝ մին Թալքիզում, 3 ը Սուլմատում: Մասցեալ վարժարաններց չուտ քշերը կանոնաւ որ ծրագրով միդաւեան են: այդ հանրապէս հին եղանակով գրել կարդալ են սովորեցնում:

Մէնք յստ աջ բերինք միայն հասաւատաքնակ

* 1894 ի Ցաւին ամսին Տամայստից յշղեր բազմարի ծագեաւ զիւռների մէս Ակրիկի վերայ յարանիութան և յարափեցան նախիրը միայն յափշտակէ: Այսուհետեւ միարանուրինք յուուց: Ուսիսաւ Մրազակի համանութ վանի եկեղեցական զոյլը Համբրվանի եկեղեցուն պահ տրուեցաւ:

հաց ժողովրդի թիւը, առ անց գաղթականները հաշուելու, խորհեկով թէ մօտ ժամանակից կարող են վերադառնալ իրենց հայրենիքը: բայց նուցանից շատերը կրնան երեխ և աղաս հողերի վրայ ընտկութիւն կհասաւատեն, ինչպէս որ այժմ Մաքուայ գաւառում 70 տուն կանոնաւ որ ապրում են: Սալմատում անցեալ տարի կային 2500 գաղթականներ, նայնչափ և Ռումինյ և Մարդուայ գաւառներում: այդ բարոր հաշուելով կանենանք 5000 անձ, որ աւելացնելով 30392 հասաւատուն ընտկեցների վերայ կունենանք 35392 Հայ Առաջատականում՝ անինում մ'նացած: «Հունձը բակումք են և մշտկը սակաւ»:



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱԿԱՆ ԲԸՖԻՒ.

ՆՈՐ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿ, ՏՈՒՐ ԵՒ ՋԱՏԱԿԱՆ ՏՕՆ.

Արդեօք նոր դարագիսի սկիզբը 1900 թուականի թէ 1901 թուականի յունուարի 1-ը պիաի համարուի՝ այս հարցը այժմ շատ է յեղյաղվում: որի նմանը նախկին ութուատաներորդ գարու վերջն էլ զանազան ապարկութիւնների ասիթ և տուել:

Ժիշգ պատասխանը միայն այս կարող է լինիլ: թէ քանիներորդ գարն սկսվում է 1901-ի յունուարի 1-ով:

Երբ որ քրիստոնուկան թուականութիւնը սահմանուեցաւ, ոյնուհետեւ ոչ ոք չէր տարակուառում: թէ 8էրունական 1 տարի: և կոչուել յուլիսներան տոմարի այն տարին՝ իւր տարի մատից սկսած մինչեւ իւր կատարածը: որ կարգել էին իրրե նոր թուականութեան կամ նոր ապէէհացուի առաջին տարի: և թէ բայ այնու յետ ձնոգեան Քըրիստոսի առաջին դարը վերջացել է այն ժամանակի երր որ «Ճէրունական» 100 տարին բալորուել էր: որով որեմն 101 տարուայ տարեցիսի հետ ի միասին՝ սկսուել է նաև յ. ծ. Ք. ի երկրորդ դարը: Ազա ուրեմն

* 1894 ի Ցաւին ամսին Տամայստից յշղեր բազմարի ծագեաւ զիւռների մէս Ակրիկի վերայ յարանիութան և յարափեցան նախիրը միայն յափշտակէ: Այսուհետեւ միարանուրինք յուուց: Ուսիսաւ Մրազակի համանութ վանի եկեղեցական զոյլը Համբրվանի եկեղեցուն պահ տրուեցաւ: